



<<ՍԵՎԱՆԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒ
ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՀԵՂԻՆԱԿ ԱՐՄԻՆԵ ԱՐԱՍՅԱՆ

ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱ/ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՍԵՎԱՆ 2023

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մույն հետազոտական աշխատանքը կատարվել է հետազոտական աշխատանքներից առաջարկվող թեմաների շրջանակներում, այն ժամանակակից հայ գրող Արամ Պաչյանի կյանքի և ստեղծագործությանն վերլուծությունն է:

Այս աշխատանքի մեջ անդրադարձել եմ նրա երեք վեպերին՝ «Ռոբինզոն և տասներեք պատմվածք», «Ցտեսություն, Ծիտ», «P/F» և «Օվկիանոս» ժողովածուին:

Ժամանակից գրականությունը շատ բազմազան և խայտաբղետ է, այսօր ընթերցողը կարող է գտնել իր ուզած գրականությունը և Հայաստանի տարածքում էլ այսօր գրում ու ստեղծագործում են բազմաթիվ տաղանդավոր հեղինակներ: Այդ հեղինակներից մեկն էլ Արամ Պաչյանն է: Հայաստանում գրքերի վաճառքը մեծ մակարդակի վրա չէ, սակայն Արամ Պաչյանն այն եզակի ժամանակակից գրողներից է, ում գրքերը սպառվում և վերահրատարակվում են ընթերցողական պահանջով:

Արամ Պաչյանի առաջին գիրքը **«Ռոբինզոն և տասներեք պատմվածք»** ժողովածուն է, որը ներփակ հոգեկան տարածություն է, որտեղ տող առ տող կառուցվող տեքստը դառնում է արտացոլքային մի ինքնավերլուծություն՝ արտաքին աշխարհի հետ բարդ ու անվերջ չստացվող փոխհարաբերությունների: Պատահական չէ, որ գրքի **«Ռոբինզոն և տասներեք պատմվածք»** վերնագրում առաջնային նշանակություն է ստրված «Ռոբինզոն» պատմվածքին, որն իր սիմվոլիկայով ու առաջադրած թեմաներով՝ կղզիացում, երկատում, լռություն, վերջին փրկության կղզի, Արամ Պաչյանի ողջ արձակի ներքին փիլիսոփայություն է ամբողջացնում: Համաշխարհային գրականության մեջ ամենատարբեր վերձանումների ենթարկված Ռոբինզոնի ու կղզու սիմվոլը (ի դեպ, հեղինակը տեքստի մեջ, անմիջական հղումներ կատարելով, օգտագործում է համաշխարհային գրական փորձը), ինքնին անչափ գրավիչ ու միննույն ժամանակ երիտասարդ արձակագրի համար ծայրաստիճան պարտավորեցնող մի քայլ է՝ արդեն գոյություն ունեցող մեկնություններից դուրս գալու, նոր եզր գտնելու համարձակություն, ինչը, մեծ հաշվով, կարող էր փակուղի տանել, եթե ռոբինզոնացումը լիներ սիմվոլիկ պարտադրանք, այլ ոչ՝ հերոսների սեփական կեցությամբ պայմանավորված բնական ընթացք:

Արամ Պաչյանը իր **«Ցտեսություն, Ծիտ»** վեպը կառուցել է ատոմար փաստերի, տրամաբանական ատոմիզմին բնորոշ սկզբունքներով: Երբ պատումը առաջ է մղվում հենվելով անտրոհելի, անբաժանելի փաստերին: Երբ պատկերվող իրերը, երևույթները, հոգեվիճակները համակցվում համադրվում են մեկ ու միասնական շղթայի մեջ: Այսպիսով ժխտվում է աշխարհակարգի միասնականությունը, փոխկապակցվածությունը:

Պաչյանը փորձում է ի մի բերել, համադրել, մոնտաժել առօրյա տեսողությունից խուսանավողը, անտեսանելին:

Արամ Պաչյանի **«P/F»** վեպը կարծես բաժակի մեջ բտած սառույց լինի, որ կեսից հալվում, աջ ու ձախ է խփվում, մինչև ջուր դառնա, լցվի ներսը, կորչի: Հետո՝ ավելի

ուշ, նորից այդ սատույցի կարիքը կա, բայց խփված տեղին դնելու, ցավ չզգալու համար: Ֆրագմենտները հիմնականում հասցնում են այնտեղ, որտեղ այլևս անհնար է, որտեղ «հոգիդ համբերությամբ կսպասի երկնքի վայրէջքին»: Ինչպես որ գրել է հեղինակը:

«P/F»-ը գրված է հատվածային, փորձարարական արձակի ոճով, նաև Ձեն-բուդդայական կոաններին բնորոշ հնչերանգով: Գրքում հանդիպում են հին ու նոր Երևանը, քաղաքի բանտարկված գետը՝ Գետառը, 2000-ականներին շահագործումից հանված տրամվայը և մենակ մարդը, որ փնտրում է իր ներկան ու անցյալը արդեն իսկ անհետացող հիշողությունների մայրաքաղաք Երևանում:

«Օվկիանոս» ժողովածուն ներառում է արդի հայ արձակի լավագույն ներկայացուցիչներից մեկի՝ Արամ Պաչյանի նոր պատմվածքներն ու էսսեները: Նրա ինքնատիպ ու արդեն ճանաչելի գրողական ձեռագիրն այստեղ երևան է բերում նոր կարելիություններ՝ ժանրային, թեմատիկ և այլ մասնավորություններում:

«Օվկիանոսում» ընդգրկված են վերջին տարիներին գրված և մամուլում հրապարակված պատմվածքներն ու այն էսսեները, որոնք դժվար է ասել՝ համապատասխանում են էսսեի ժանրին, թե ոչ, ինչն էլ ամենահետաքրքիրն է, որովհետև այս գրքի ձևը և ոչ բովանդակությունը, գլխավոր ընդգծումն է առաջադրված մյուս բոլոր իմաստների: «- Ինձ համար ձևը միշտ էլ առաջնայնություն է ունեցել, որովհետև արձակի պատնեշը, կարծում եմ, ձևն է, որի հետ երկխոսելու գայթակղությունը մեծ է, -ասել է հեղինակը, -Չեմ կարող ասել, թե գիրքն ինչի մասին է: Այն իմ նախորդ գրքերի օրգանական շարունակությունն է, մի հատվածը Գրքի ստեղծման նպատակն առաջին հերթին ընթացքը կազմավորելն ու կարգավորելն է, մամուլում ցրված գործերը վերանայելը, այս կամ այն ստեղծագործությունն ընտրելը և դրանից հետո մինչև 2006 թվականը հետ նայելը, փորձել հասկանալը, թե իրո՞ք հետաքրքիր էր այն, ինչ արել էս այդչափ հետաքրքրասիրությամբ, թե՞ տպավորություններն ուրիշ են: Գրքի ստեղծման հաջորդ գլխավոր նպատակը իմ ընկերներին ու ընթերցողներին պարզապես գրքով ներկայանալն է: Դա ինձ համար ամենակարևոր ճանապարհն է: Նրանք, ովքեր դեռևս հեղինակին գրքով են պատկերացնում, կհասկանան ինձ:

Պաչյանը ճանաչելի հեղինակ է, լավ առումով ճանաչելի: Խնդիրների շրջանակը, որ դառնում է նրա գրականության թեման, շատերին է հոգեհարազատ, շատերի անձնական մտահոգությունն է: Ամենակարևորը ժամանակակից է մտածողությամբ, հեղինակ է, որի տեքստը զերծ է տարեքր տեսակի նախապաշարմունքներից՝ քաղաքական, կրոնական, ազգային, որոնք էլ ամենից առաջ վնասում են լավ գրականությանը:

ԳԼՈՒԽ 1: ԱՐԱՄ ՊԱԶՅԱՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծնվել է 1983 թվականի մարտի 19-ին, Վանաձորում, բուժաշխատողների ընտանիքում: Հայրը ճանաչված վիրաբույժ Հակոբ Ղուկասի Թամամյանն է, ով 1988-1994 թվականներին կամավոր և գործուղումով մեկնել է ՀՀ Գորիսի, Մեղրիի, Ճամբարակի, Նոյեմբերյանի, Արցախի Հաղորութի, Շահումյանի շրջաններ, Գետաշենի ենթաշրջան, Ստեփանակերտի հիվանդանոցներում, կենտրոնական և ռազմադաշտային շարժական հոսպիտալներում բուժել և վիրահատել է վիրավոր ազատամարտիկների ու խաղաղ բնակիչների :

1999-2004 թվականներին Պաշյանը սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում: 2002 թվականին Բրիտանական Արևելք-Արևմուտք Կենտրոնի կողմից կազմակերպված «Նախադեպային իրավունքը և Մարդու Իրավունքների Պաշտպանության Եվրոպական Կոնվենցիան» սեմինարներին ակտիվ մասնակցության համար արժանացել է «British East West Center and Center of Comparative Jurisprudence» հավատարմագրին: 2003 թվականին մասնակցել է Ամերիկյան իրավաբանների Ասոցիացիայի կողմից կազմակերպված «Քաղաքացիական պատերազմների ընթացքում կանանց և երեխաների իրավունքների պաշտպանությունը» թեմայով «Philip C Jessup» անվան միջազգային մրցախաղին՝ ճանաչվելով որպես լավագույն բանախոս: 2004-2006 թվականներին ծառայել է Հայաստանի Զինված Ուժերում: Պատմվածքները, էսսեները պարբերաբար տպագրվել են գրական մամուլում՝ («Գրական թերթ», «Գրեթերթ», «Եղիցի Լույս», «Նարցիս» գրական հանդես, «Ինքնագիր» գրական հանդես): 2008 թվականին «Թափանցիկ Շշեր» պատմվածքի համար արժանացել է «Գրեթերթ»-ի ամենամյա մրցանակին: 2009 թվականին «Ռոբինզոն» պատմվածքի համար կրկին արժանացել է «Գրեթերթ»-ի ամենամյա մրցանակին: 2009 թվականին «Աշխատանք, Աշխատանք» և «Շախմատային Նովել» պատմվածքների համար արժանացել է «Նարցիս» գրական-գեղարվեստական մշակութային հանդեսի մրցանակին: 2010 թվականին «Actus Tragicus» էսսեի համար արժանացել է «Գրեթերթ»-ի ամենամյա մրցանակին:

2010 թվականին Պաշյանին շնորհվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի երիտասարդական մրցանակ՝ 2009 թվականին գրական մամուլում տպագրած պատմվածքների շարքի համար:

2012 թվականին 106.5 Լրատվական ռադիոյով վարել է «Գրադարանում Արամ Պաշյանի հետ» հեղինակային հաղորդաշարը:

2015 թվականին՝ «2013-14 թթ. Լավագույն Արձակ Ստեղծագործության համար» արժանացել է «Անդին» գրական ամսագրի մրցանակին:

2015 թվականին «ԹՈՒՄՈ» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնում վարել է գրելու և գրականության դասընթաց:

Արամ Պաչյանի դեռևս անտիպ «P/F» վեպի տեքստերի հիման վրա 2015 թվականի Փետրվարի 22-ին «DILIJAN CHAMBER MUSIC»-ի շրջանակներում ԱՄՆ-ի Լոս Անջելոս քաղաքի «Zipper Hall» սրահում կատարվել է շվեյցարաբնակ կոմպոզիտոր Արամ Հովհաննիսյանի վոկալի, ջութակի և հարվածային գործիքների համար գրված «Pachyan Fragments» ստեղծագործությունը:

2016 թվականին Պաչյանին նկարահանել է Նիդերլանդական հայտնի VPRO հեռուստաընկերությունը՝ «Offline is the new luxury (VPRO backlight)» վավերագրական ֆիլմում:

ԱՄՆ-ի Այովայի համալսարանի «Գրողների Միջազգային Ծրագրի» 2018թվականի շրջանավարտ է:

Արամ Պաչյանը հայտնի անուն է ժամանակակից գրական աշխարհում: Մամուլում դեռ 10-12 տարի առաջ տպագրված նրա առաջին իսկ պատմվածքը հետաքրքրություն առաջացրեց, որից հետո էլ նրա հեղինակած գրքերը նրան ոչ միայն մեր հասարակության մեջ ճանաչում բերեցին, այլև տարբեր անվանակարգերում մի շարք գրական մրցանակների ու պարգևների արժանացրին, այդ թվում՝ 2009 թվականին ՀՀ նախագահի երիտասարդական մրցանակի գրականության ասպարեզում:

Արամ Պաչյանի հերոսներն իր սերնդակիցներն են, իրենց հոգսերով ու խնդիրներով դեպի ինքնաճանաչողություն մղվող երիտասարդներ, ովքեր փորձում են նաև միմյանց հետ փոխհարաբերություններում իրենց համար արժեքներ որոնելու ուղիներ գտնել: Արամ Պաչյանի ստեղծագործությունները թարգմանվել են մի շարք լեզուներով:

Ուկրաիներեն թարգմանված «Ռոբինզոն» ժողովածուից բացի, Արամ Պաչյանի մի շարք պատմվածքներ թարգմանվել են ռուսերեն, անգլերեն եւ տեղ գտել տարբեր մշակութային ու կրթական պլատֆորմներում: Մեկ տարի է արդեն՝ ամբողջությամբ անգլերեն է թարգմանվել նաև գրողի «Ցտեսություն, Ծիտ» վեպը՝ Նաիրի Հախվերդիի կողմից: Հիմա աշխատանքներ են տարվում հրատարակիչ գտնելու ուղղությամբ:

ԳԼՈՒԽ 2: «ՌՌԲԻՆՉՈՆ ԵՎ 13 ՊԱՏՄՎԱԾՔ»

«Ռոբինզոն» (կամ՝ «Ռոբինզոն և 13 պատմվածք»), հայ արձակագիր Արամ Պալանյանի պատմվածքների ժողովածուն է: Առաջին անգամ լույս է տեսել 2011թ-ին Երևանում «Գրական էտալոն» հրատարակչության կողմից: Վերահրատարակվել է 2012թ-ին «Անտարես» հրատարակչության «XXI.» մատենաշարով: Գիրքը բաղկացած է 168 էջերից:

«Պատմվածքների այս ժողովածուն համաշխարհային «ռոբինզոնադի» ավանդույթների յուրօրինակ շարունակությունն է՝ Արամ Պալանյանի գրողական ինքնատիպության դրոշմով: Երբեք չթուլացող զգայականությամբ, կառուցվածքային նուրբ խաղարկումներով հատկանշվող այդ պատմվածքներում յուրաքանչյուր հերոս յուրովի է փնտրում ու գտնում մարդկային նախաստեղծ պարզ ու անկեղծ կեցության իր կղզին»:

Հայ ժամանակակից գրող («Հրապարակ» օրաթերթի մշակութային մեկնաբան) Արամ Պալանյանի «Ռոբինզոն» պատմվածքների ժողովածուն լույս է տեսել նաև ուկրաիներեն: Գրքի շնորհանդեսը եղել է միանգամից 2 քաղաքներում, առաջինը՝ Կիևում՝ մի քանի գրախանութներում, ապա Լվովում՝ ամենամյա Լվովյան հրատարակչիչների միջազգային ֆորումում, տարբեր ձեռագրերով՝ ընթերցում, քննարկում:

Արամն իր խոսքում ընդգծում է, որ այսօր շատ դժվար է ուրիշ երկրում գիրք տպագրելը, հաշվի առնելով նախեւառաջ այն հանգամանքը, որ շատ են հեղինակներն ու հրատարակվող գրքերը: Այդ տեսանկյունից գրողը ձեռքբերում է համարում իր «Ռոբինզոն» գրքի տպագրությունն արդեն ուկրաիներեն:

Արամ Պալանյանի հավաստմամբ՝ ուկրաիներենի կողմից կարծիքներ են հնչել, թե «Ռոբինզոնը» համահունչ է հոգեբանական այն իրավիճակին, որի մեջ տեսական ժամանակահատված է, ինչ գտնվում է Ուկրաինան: Այս ժողովածուում տեղ գտած պատմվածքները, որոնք թեմատիկ կապ ունեն միմյանց հետ, առնչվում են «ռոբինզոնադա» ժանրին եւ հիմնականում վերաբերում են մարդկային կյանքի կորուսյալ հատվածներին, ակնթարթներին, որոնք առաջին հայացքից թվում է՝ կարելուր չեն:

Գաղափարը, որն առաջնորդում է Պալանյանին բոլոր պատումների կերպարակերտման ընթացքում, ձեւավորվում է «Ռոբինզոն» պատմվածքում: Կեցության մի որոշակի տիրույթում հեղինակը իմաստավորում է հարցեր, որոնք ընդունված է դասել հավերժական երեւույթների շարքը, եւ որոնք հասանելի են միայն ապակառուցման (ազատել ստեղծագործությունը թախիծից) միջոցով, ինչը գործնականում իրականացնում է Պալանյանը՝ «Դռան տակից սեւ ջուր է հոսում, շոգից հոգնած օձի պես, բերելով մանուկների դեմքերը... Էլ մենակ չես լինի քո կղզում... մենակ ձուկ չես որսա, չես մեռնի մենակ, մենակ Աստծո հետ չես կիսվի, ձկների ու խխունջների երգերը չես լսի, պարզ երկնքի տակ չես քայլի, ստվեր չի լինի, որ պառկես հանգստանալու: Այստեղ ոչինչ չի մնացել, բացի չարագուշակ ձայներից, որ

առատորեն լցվում է բերանդ, ականջներդ, քիթդ, եղունգներիդ արանքները, մաշկիդ տակ, կոպերիդ մեջ»:

Իրականության պատկերավորման գաղափարը, որ հեղինակին չի տրվում անգոյությունից, այլ ներքին հոգեւոր տիրույթից, տարածվում է որպես արմատ, որից ծնվում ենք նաեւ մենք. «Հայրս ասում էր՝ ճամպրուկների մեջ թզուկներ են ապրում, որոնք գիշերով զարթնում են ու վազվզում սենյակներում... Ասում էր նաեւ, որ թզուկներից մեկն ինձ է նման՝ նույն խալը ճակատին, մեծ փորով, մի քիչ էլ նեղացկոտ» («Ճամպրուկը»):

Պատկերներն ու թեմաները հեղինակին թույլատրում են ստեղծել ժամանակակից մշակութային սյուժեներ՝ հարաբերելով դրանք մարդու եւ աշխարհի, պատմության ու կեցության խնդիրներին, որոնց ներքին տիրույթում առավել կամ քիչ չափով հասանելի են Ես-ի տարբեր մակարդակներն ու փոխակերպումները. մանկության մասին պատմող Ես-ը տարբերվում է ոչ շատ հեռու ժամանակներում կատարվող իրադարձությունների մասին պատմողից: Այս դեպքում վերանում է Ես - կենսագրություն շրջանաձեւ փոխներթափանցումների սահմանը, այլ կերպ՝ հեղինակը պատմում է իր պատմությունը, որի շարունակականությունը պարբերաբար միջարկվում է այլոց (մասին) պատմություններով:

«Մենյակը նմանվել է կաշվե մաշված կազմով Աստվածաշնչի» («Ռոբինզոն»): Կղզու նմանակներն են նաև հիվանդասենյակը («Գիշերը ստվերի տակ»), ճամպրուկը («Երկու պատմություն սիրո մասին»), վեր խոյացող սունկը («Տորոնտո»), որտեղ մենանալով ամբողջական Եսը (նաև՝ երկնային, հողեղեն, տառապող եսը)՝ ոչ միայն պաշտպանություն է ակնկալում արտաքին աշխարհից, այլ նաև ձեռք բերում որոշակի բարձրության դիտարան՝ առօրյա կյանքի անցուդարձը ուսումնասիրելու, փրկության նոր ափի մասին երազելու: «Իմ թանկագին Ուրբաթ, ամեն օր ես ու Հիսուսը պատուհանի մոտ կանգնած՝ քո նավակի ալիքներին ենք սպասում», գրում է «Ռոբինզոն» պատմվածքի հերոսը՝ որպես հպանցիկ նախասկիզբ հիշատակելով Հիսուս անունը (պատմվածքում Հիսուսը տղայի մենության լուռ ընկեր թութակն է), իսկ նավակի, ալիքների ու փրկության կղզու ակնկալվող սպասումն արդեն առավել ակնհայտորեն մատնանշում են Քրիստոս-Ուրբաթին, որ պետք է գա ջրերի վրա քայլելով և բոլոր տառապող ռոբինզոններին դեպի փրկության ափ ուղղորդի: Ուրբաթի կերպարի զուգահեռումը Քրիստոսի հետ դեռևս Դանիել Դեֆոյի «Ռոբինզոն»-ից եկող հուշում է. սիմվոլիկ այդ անունը՝ Ուրբաթ, որ Ռոբինզոնը տալիս է վայրենուն, մատնանշում է Քրիստոսի խաչելության ուրբաթ օրը, երբ մարդկությունը մեղանչելու հնարավորություն ստացավ, իսկ հարության կիրակին՝ որպես ընձեռնված նոր կյանքի խորհրդանիշ, ավելի ուշ պետք է գար: Իսկ նոր կյանքի խորհրդանիշն, այս դեպքում, ներհոգեկան պատյանից դուրս գտնվող այն մյուս կղզին է, հենց այն փրկության ափը, երանգավորված դրախտի ներդաշնակությամբ, որտեղ ձգտում են հասնել Արամ Պաչյանի՝ երկրային կյանքում տառապող հերոսները (կղզին սպասում է, ինչպես հայրը որդուն): Փրկության ափ կղզու մեկ այլ մարմնավորում է Տորոնտո քաղաքը (համանուն պատմվածքից). Տորոնտոն ճիշտ այն

նույն լռության կղզին է, որի փնտրտուքով զբաղված է Ուրբաթը: Սակայն Տորոնտոյի իրական լինելը դեռևս ոչ մի երաշխիք չի տալիս, որ փրկության կղզին ի վերջո գտնված է. քանզի Արամ Պաչյանի Տորոնտոն նույնքան մտացածին ու անհաս է, որքան այնտեղ հասնելու համար հավաքված գումարը՝ 15 600 դրամ: Նույնքան անորոշ տարածական հեռավորության վրա է նաև Ռեբինգոնի Ուրբաթը. ավելին՝ Ուրբաթի նամակները Քրիստոսի ու ենթադրյալ կղզու միայն հեռակա թուղթ-վկայություններ են:

Սակայն իրական փրկության ափը ամբողջ գրքում այդպես էլ մնում է անորոշ հեռավորության վրա, և հենց այստեղ է, որ քրիստոնեական փրկության հավատը փոխարինվում է պոստմոդեռնիստական անհուսությամբ, իսկ ներդաշնակ լռությանը փոխարինելու է գալիս լռության մոռացությունը, հերոսների ճանապարհային վերջնակետի ընտրության անորոշությունը: («Ռեբինգոն» պատմվածքի վերջում հերոսը հեռանում դեպի անորոշ ուղղությամբ գտնվող ենթադրյալ նավակը, «Տորոնտո»-ում՝ փակվում նկուղում ու թթվի տակառին նստած «ենթադրյալ թոնիչքի» նախապատրաստվում, «Երբը միշտ հիշել քեզ» պատմվածքում՝ ծղրիդի մեջքին նստելով հեռանում, «Տխուր նավակներ»-ում՝ մեքենայով ինչ-որ անորոշ ուղղություն վերցնում, «Գիշերը ստվերի տակ» պատմվածքում՝ հիվանդասենյակի երկու տղաները դուրս են գալիս ու աշնանային այգում խոսելով՝ անորոշ հեռանում):

Կղզին հասարակությանը վերաբերմունքի պատասխան հակազդումն է, որի ներսում հաճախ կուտակվող հուզումները, ապրումներն ու էներգիաները արտահայտման այլ ելք չգտնելով՝ ներքին պայթյուն են ապրում՝ ստեղծելով մեծ Ես-ի երկատված կիսադեմքեր, որոնք միմյանց կողքից դիտարկելով ու ինքավերլուծելով՝ փորձում են որոշակի հեռավորությունից հասկանալ ամբողջական Ես-ի առանձնահատկությունն ու ապրումները, հասարակության մեջ իրենց տեսակի գտնվելու անհնարինությունը:

Քաղաքական շատ հստակ իրադարձության մասին պատմող «Տխուր նավակներ» պատմվածքն ամբողջովին ինքավերացարկման որոշակի բարձրությունից կատարված դիտարկում է: Գլխավոր հերոսի սահմոկեցուցիչ նույնականացումը հեղափոխական անիմաստ իրարանցման զոհ դարձած երիտասարդի հետ, նման է սեփական կամքով ինքախաչման: Չոհված երիտասարդի գրպանում գտնված բուլկին առօրեականության սովորական ընթացքի ընդհատվածություն է նախանշում, սովորական մի կյանք, որ բուլկի ուտելու չափ հասարակ գործողության համար էր նախատեսված, իսկ այժմ՝ չկա: Միաժամանակ բուլկին պտտահողմի պես բերում է մանկության անգորությունն ու անպաշտպանվածությունը, ու ցավն էլ ավելի խորքից է հնչում՝ այն ցավոտ բարձունքից՝ դեպի այն այն հեռավոր մանկությունը: Բոլոր հուսահատությունների զուգաձևումը հասնում է մինչև մանկության անգորություն. «Դու չես նկատել, որ ուսուցիչը երկար ժամանակ կանգնած է կողքիդ ու քեզ հետ միասին անհամաչափ շարժում է ծնոտը: Դու բուլկին վախվորած խոթում ես գրպանդ, արագ սրբում բերանդ, ներողություն ես խնդրում: Քեզ միշտ թվում է, որ բուլկի ուտելիս թիկունքիցդ մարդիկ են նայում, դրա համար էլ տագնապով ու ամոթխած ես ուտում: Երանի ես տալիս, որ հանկարծ ծանոթ մարդ չհանդիպի... Մի տեսակ լավ չի

զգա, որ բուլկի ես ուտում, կնեղվի ...» (Էջ 122), «Մոխրագույն տաքատը գոտկատեղից ներքև մուգ է, տանձաձև, կարծես Աֆրիկա մայրցամաքը լինի... Դու շատ ամաչկոտ էիր: Երբ տակդ էիր անում, մեղքի զգացողությունից ամբողջ օրը լաց էիր լինում, մտնում էիր տուփերից պատրաստած տնակդ, դուրս չէիր գալիս... Հիմա ի՞նչ... Մահը մեղքի զգացողությունն է...» (Էջ 126): Իր փոքրության ու խեղճության մեջ մարդը միշտ միայնակ է լինում. բուլկի ուտելն անհատական գործողության է, որի իրավունքը կարծես թե խախտվել է. մարդը դադարել է ինտիմ կյանք ունենալուց՝ իր բաց գաղտնիքի հետ հայտնվելով հասարակության առջև: Սակայն հետաքրքրական է, որ սեփական եսը ինքնախաչման դատապարտած հերոսն անկարող է ընդունել Աստծո նախանշած ճակատագրի հնազանդությունը. «...պատարագ, մոմավառություններ... ձևամոլության անխախտ հերթականություն... բայց մենք երկուսս էլ գիտենք, որ Աստված չկա, Աստված չի կարող լինել, որովհետև Աստված չի կարողանում մարդ լինել, Աստված չկա, որովհետև Աստված չի կարող Աստված լինել» (Էջ 130): Ի տարբերություն իրական Ռոբինզոնի, ով կղզում հայտնվելու իրողությունն իր գործած մեղքերի համար բնականոն պատիժ էր համարում, Պաչյանի Ռոբինզոն-հերոսները ոչ մի կերպ չեն կարողանում գտնել իրենց տառապանքի ու մենության դատապարտվածության նախահիմքերը: Ակամա հայացքն ուղղվում է դեպի մանկություն, սեփական ընտանիք, և հանկարծ իր ամբողջ կերպարով հայտնվում է հայրը՝ որպես Աստծո նախակերպար, և բանավեճը երկու հայրերի միջև տեղափոխվում է միևնույն հարթություն: Համանման ակնկալիքներ ու հիասթափություն, որ անկարող են իրենց իսկ արարածին փրկել տառապանքից. սա առավելապես մանկական հուսահատությունից առաջացող վրեժխնդրություն է, որը սակայն վերջնարդյունքում անկարող է թաքցնել անսահման սերն ու ակնկալում է փոխադարձ ներողամտություն: («Ես Աստծուն չեմ հավատում, բայց չգիտես ինչու համոզված եմ, որ նա հավատում է ինձ»): «Տեր Վիլիկը» պատմվածքում հեղինակը նույնիսկ փորձ է անում միմյանց մոտեցնել երկու հայրերի կերպարները, և ի դեմս հոգևորական Տեր Վիլիկի՝ ստանալ իդեալական հոր կերպար՝ օժտված ամենակարևոր հատկանիշով՝ դիմացինին լսելու կարողությամբ:

Գրականությունն ու թուղթը նոր բացահայտված մի տարածություն են դառնում (գուցե նաև մի նոր կղզի) հոր կերպարը վերլուծելու, հոգում կուտակված տխրությունը վերհանելու: Բառերը նմանվում են կրակահերթի հաջորդականությամբ հնչող տարափի: «Թափանցիկ շշեր» պատմվածքը մի շնչով գրված ստեղծագործություն է. պատմվածքի հերոսը ավտոմատացված ռեժիմում գտնվող հերոսն է, և թվում է՝ եթե մի պահ կանգ առնի, կարող է կորցնել սեփական հավասարակշռությունն ու գլորվել ինչպես ոտքերի վրա հարբածությունից երերացող հայրը: Վազել՝ սեփական ուսը որպես հենարան մեկնելով, վազել՝ չզգալու սեփական ընդարմությունը: Համարյա բոլոր քերականական խոտորումները Արամ Պաչյանի արձակում նպատակային են և իրենց ուսերին են կրում տեքստի ներքին հոգեբանության որոշակի զարգացման պատասխանատվությունը: Այս գծի հեռանկարային շարունակությունը Արամ Պաչյանի ապագա տեքստերի համար

որպես նոր լեզվի, լեզվական նոր կառույցների ստեղծման հաճելի կանխատեսում կարող է լինել՝ ճանապարհ քաջելով առավել մեծ արձակ:

«Ռոբինզոն և տասներեք պատմվածք» ժողովածուն արձակագրի առաջին գիրքը լինելով հանդերձ՝ ամրակուռ լեզվական հիմքեր ունեցող տեքստ է՝ սիմվոլիկ պատկերների ինքնատիպ վերլուծությամբ, իսկ նույնականացման ընթացքի անկեղծությունը սեփական հերոսների ճակատագրի հետ այն ամենամեծ հաղթաթուղթն է, որով հեղինակը գերում է իր ընթերցողներին:

Եթե մի օր մարդը ընդունակ լինի դադարեցնելու իր մանկության տարածականությունը, ապա չապրի ու չվերհիշի ետ վերադառանալու զգացական ինքնությունը, ուրեմն Ռոբինզոն Կրուզոն այս անգամ արդեն վերջնականապես հավաքելու է հարակալությունության իր ապահով ճամպրուկը:

ԳԼՈՒԽ 3: «ՑՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԾԻՏ»

«Ցտեսություն, Ծիտ», հայ արձակագիր Արամ Պաչյանի վեպը: Առաջին անգամ հրատարակվել է 2012 թվականին՝ «Անտարես» հրատարակչության «XXI.» մատենաշարի շրջանակներում:

«Ցտեսություն, Ծիտ» վեպի երկրորդ հրատարակությունը տպագրվել է հեղինակի մասնակի վերամշակումից հետո: Հրատարակել է «Դարակ» հրատարակչությունը

2017 թվականին: Այս հրատարակության մեջ հեղինակը հավելել է նաև վերջաբան, կազմված է 216 էջից:

«Ցտեսություն, Ծիտ» վեպի վերնագիրը նա ընտրել է մի քանի տարբերակ քննարկելուց հետո. «Շատ տարբերակներ եմ փոխել, ինքս չէի հավանում: Հերոսը, բանակից վերադառնալով, դեռ այնտեղ է մտքերով ու հրաժեշտ չի տվել: Նա ցտեսություն է ասում՝ հույս ունենալով, որ մեկ օր վերադառնալու է: Մա ազատագրման ու կյանքի կոչի ցտեսություն է, դեպի կյանք գնալու խնդիրն է դրված:

Զինվորական ծառայությունը ավարտած, զորացրված «Ցտեսություն, Ծիտ» վեպի գլխավոր կերպարը (պատմողը) փորձում է ապաքինել ծառայության ընթացքում ստացած հոգեկան ու մարմնական վերքերը, ազատագրվել, թոթափել բոլոր կասկածները, վերագտնել նախկին հոգեկան անվրդովությունը՝ արտաքսիան և՝ աշխարհին նայել ուրիշ հայացքով «... որովհետև զորացրվելուց հետո տարածության և ժամանակի միակ նահանգապետը դու ես...»:

Փորձում է զգալ կնոջը, իսկ այդ զգալու ընթացքը, արարողակարգը չափազանց հեռու է դոն-ժուանական ծեփճեքումներից: Կնոջ մարմնեղեն կերտվածքի, հյուսվածքներում՝ առնչվել կնոջ ներաշխարհի քայքայերին, նյութեղեն սլացումների որոգայթներում՝ քողազերծել կնոջ բնույթի առեղծվածայինը՝ «Մոր թափանցում այնքան խոր, որ մի պահ երջանկությունը գրեթե հասանելի էր, շոշափելի և գտնված, այնքան խոր, որ մահն ու բաժանումը այլևս անհասանելի էին: Նրա ներսում այնքան լուռ էր, որքան վաղուց լքված տան մեջ: Դու տրվում էիր վերադարձի խենթությանը և այդ փախուստը միմիայն նրա լույսն էր, որ հանձնվում էր քեզ, որպես վերջին հնարավորությունը՝ ինքնակամ հանձնվող մոլուցք վաղուց չհնչած խոստովանությունը»:

Բայց հստակ երևում է, որ թոթափելու, ազատագրվելու ընթացքը բնավ էլ դյուրին չի լինելու: Որ մղձավանջային անցյալը ներկայից առավել ներկա է գտնվելու, որ զորացրվածը պրծում չի ունենալու, որ նրա ապրած յուրաքանչյուր պահը ծավալվում, խաղարկվում է կատարվածի ահեղ, անողորմ մականի ներքո. «Ես վաղուց զորացրվել եմ, հասկանո՞ւմ ես, ինձ հանգիստ թող հրամանատար... Ամեն գիշեր գալիս ես, թաքնվում ես մահճակալիս տակ և ձեռքիդ շղթայով գլուխս շաղ ես տալիս... Դիակին ինչքան ուզում ես խփի: Ես միս ու արյուն չունեմ: Դու էդքան բո՞ւթ ես, մինչև հիմա գլխի չե՞ս ընկել, ախմախ վիժվածք»:

Պաշյանը կարծես հստակ տեղորոշում է դժոխքն իր բոլոր լաբիրինթներով, պատժախցերով, լուսանկարում, երևակում է մարդկանց հոգիներում կուտակված մաղձը, չարությունը, աստելությունը, և «դաժանության թատրոնը» խաղարկվում է իր բոլոր հրեշավոր արարներով... «... փոթկալով ծիծաղեցի... չգիտեի, որ իմ ծիծաղը բերանիս վերջին հրաժեշտն էր: Երբ ինձ քարշ տվիր սենյակ, փակեցիր դուռն ու սկսեցիր բութ հարվածներով ջարդել, մի պահ թվաց՝ հարվածներդ այնքան անկեղծ են, կատաղի ու անմիջական, որ ես դրանք ընկալեցի որպես մարմնիս համար այսքան տարիներում բացակա ձեռքերում, որպես ազնիվ հաճոյախոսություն»:

Եվ ակամա խորհում ես, իրականում բանակում ինչ կարգ է սահմանված եղել, ինչ հրահանգներով ու կանոնադրությամբ են առաջնորդվել ռազմական գործի պատասխանատուները: Վերջապես ինչպիսի՞ բարքեր և սովորույթներ են իշխել զորամասերում: «Ցտեսություն, Ծիտ» վեպի պատումային հյուսվածքներում որքա՞ն է իրողությունը, ստույգ կատարվածի չափաբաժինը, որքա՞ն հորինվածքը, գրական հնարանքի արդյունքը: «Ծանր աստղերդ քարշ ես տվել, եկել ես մեռած մարդու հետևից... հիմա էլ զորացրված զինվորների հետևից ես գալիս: Դիակի գործարա՞ն ես բացել»:

Եվ արձակագրի անսքող հեզնանքն ու քամահրանքը. «Փոխանակ գաս... գրուցենք թշնամու սպառազինությունից, բանակի ճակատագրից, քո փառավոր անցյալից, կարծես դու ահագին հերոսություններ ես արել չե՞, թե՞ հորինում էիր»:

Պատմողը իբրև գործողությունների ծավալման տեղանք իրագեկում է «Զորամասի տարածքը»: Բայց ուզում ես հարցնել՝ գրողը տանի, ի վերջո, ո՞ւր է կատարվել այս ամենը: Որ հարթության վրա է խաղարկվել սույն հրեշավոր ֆարսը: Մի բան ակնհայտ է, որ ռուսսոյական «հոտային պայմանավորվածությունը» պարտադիր կանոնի գործառույթի է վերածվել: Երբ բոլորը բոլորին ճնշում, նվաստացնում են, իսկ հրամանատարի զինվորներին օրնիբուն կտտանքի ենթարկելը առօրյա զբաղմունք է. «Բայց հիշո՞ւմ ես, հրամանատար՝ ր, ոնց ատամներովդ խզրզեցիր դեմքս: Սաղ խառնեցիր իրար: Տղերքն ասում էին՝ իբր ամեն օր, լուսաբացին ոսկյա ատամնաշարդ սրում ես էլեկտրական սրիչով: Երևի կատակում էին կամ ճիշտ էին: Ես էլ ցավ չէի զգում, ուղղակի ինչքան շատ էիր խփում գլխիս, այնքան ավելի էր խորանում դատարկությունս: Գլխիս իջած ամեն հարվածդ ինձ մտածել էր սովորեցնում, սովորեցնում էր հիշել ու հեռանալ՝ կոշիկներիդ տակ թողնելով մարմինս»:

Բայց մեր «փառապանծ» գեներալները գիտեին կամ չգիտեին Տաթևացու ժամանակներից բացահայտված ճշմարտությունը, որ «հոգին ու մարմինը միաձույլ են» և գործում են միասնաբար, և որ կրունկների տակ առնելով զինվորի մարմինը, լլկում, նվաստացնում ես նույն զինվորի հոգին, և լլկվում նվաստացվում է ոգին, ոգեղենը...

Վեպի բազմաթիվ հատվածներում առկա է «Ծովի» խորհրդանիշը: Եվ դա բնավ պատահական չէ պայցանական «տեղատվություններով» և «մակընթացություններով» հարուստ պատումների պարագայում. «... Քո պես հնությունները դեռ շատ կգան ու կանցնեն՝ ծովի հուզով գեղեցկությունը թողած, որ միակ շոշափելի տեսիլքն է, ծովը հիմա ու հետո չունի, չի զգում ափիդ, մարմիդ ծանրությունը...»:

Վաղնջական ժամանակներից Ծովը հուզել ու ավեկոծել է մարդու ներաշխարհը: Առինքնել է իր խորությամբ, անսահմանությամբ, իր ալիքների առեղծվածային ահագնությամբ:

Եվ Արամ Պաչյանը ընթերցողի հետ «կիսվում» է ծովի իր հեռագնա զգացողություններով, ծովի պատկերման իր աննախադեպ տարբերակով: Պաչյանը

ընթերցողի «անծիր ջրերի միջով» հեռավոր նավարկության է դուրս բերում՝ գեղազիտական նոր, անհայտ «կղզիներ» բացահայտելու խոստումով...

Սա Արամ Պաչյանի աշխարհն է, ուր ամեն ինչ մարդեղենացված է ու մարդկային կերպարանք առած: Եվ այդ աշխարհը շնչում է, ուրախանում, տխրում է, երազում ու խորհում է մարդու նման. «...կմնա՞ արդյոք ինքը ծառի հիշողության մեջ, թե կմոռացվի անվերադարձ. մյուս զինվորը, որ պատկելու է իրենից հետո, պատուհանից դուրս նայելիս կտեսնի՞ արդյոք ծառաբնին դրոշմված իր գունատ դեմքը, քանի՞ ծառաբուն կա աշխարհում՝ բուժկետերի պատուհանների դիմաց, որոնք մարդկանց վերջին հայացքներն են ազատագրում»:

Ուզում ես երկու ձեռքով, քո ողջ էությանը կառչել սույն պատկերից և ձայնարկել՝ սա՛ է ճշմարտությունը, այն ճշմարտությունը, որ անկասելի ծավալվելու է գալիք ժամանակի հոլովության մեջ. հոգու և մարմնի համար այս դժվարին ժամանակներում, երբ հոգևոր ցուրտը խուժել է բոլորեքյան, ջերմացնելու է մարդկանց հետզհետե սառչող սրտերն ու հոգիները: Եվ «փուչ, ունայն» համարվող կյանքը վերստին իմաստնացած, լցվելու է կյանքով, և դու լսելու ես մարդկանց «...խաղի ու երջանկության ճիշերը, վազքը, սառույցների վրա սայթաքելը, սահնակը, ձյան համր. ամեն ինչ խտացել է փաթիլների մեջ, որոնք իջնում են երկինքը անվերադարձ լքող ճերման հրեշտակների թախիծով»: Ի վերջո, մարդը, երկիր մոլորակի ամենատոկուն ու ամենափխրուն բնակիչն է, որ մշտապես պատուհասվում ու վտանգվում է, մշտապես սատարի և պաշտպանության կարիքն ունի. «Նա փակել էր աչքերը ու մտածում էր ծաղկամանով ծաղկի մասին, մտածում էր՝ տեսնես ծաղիկը լսո՞ւմ է մարդկային բառեր, ընդհանրապես ծաղիկը լսողություն ունի՞, պե՞տք են նրան ձայները, ծովի ալեբախությունը, թռչունների ծվվոցը, հառաչները: Ծաղկի սիրտը ո՞ր մասում է: Բժիշկը կանգնեց դռան մոտ, բայց չբացեց, չթակեց դուռը: Ծանր էր շնչում՝ խզոցով, նույնիսկ լսվում էին սրտի զարկերը: Ծաղկի ու բժշկի սրտերը: Ծաղկինը երբեք չի լսվում, իսկ բժշկինը խփում է խելագարի պես: Վախեցած սիրտ»

Հեղինակն օգտագործել է նաև նաեւ ասպետական վեպի հնարքներից. հերոսները մահանում ու նորից վերակենդանանում են հաջորդ գլուխներում»:

Սա ներաշխարհային վեպ է՝ զարգացած ներքին պատումի ձևով: Ներաշխարհային պատումի մեջ Պաչյանը կարողացել է դուրս գալ հասարակական, քաղաքական խմորումներից մարդկանց հուզող հարցերի շրջանակ: Արամը շատ կարճ ժամանակում կարողացավ ապացուցել, որ ինքը անցողիկ հեղինակ չէ:

Իսկ թե որքանով է վեպն ինքնակենսագրական տարրեր պարունակում, հեղինակը նշել է, որ հորինվածքի չափաբաժինը մեծ է. «Ինքնակենսագրականի շրջանակից դուրս եմ եկել. գեղարվեստական գործ գրելիս հորինվածքի առկայությունն ինձ համար կարևոր է, որի միջոցով նկարագրել եմ ներհոգեբանական վիճակները»:

Արամ Պաչյանը վեպը գրելիս թուղթ ու գրիչը գերադասել է համակարգչի ստեղնաշարից. «Երբ գրիչով եմ գրում, ինձ վրա ավելի շատ աշխատելու հնարավորություն եմ ունենում, իսկ համակարգչի էկրանը խաբուսիկ է, սկզբում

թվում է՝ ամեն ինչ լավ է ստացվում, բայց այդպես չէ: Ընդամենը մի քանի պարբերություն եմ համակարգչով հավաքել»:

Ոճական հանդուգն լուծումներով և կտրուկ անցումներով լեզվական հյուսվածքաշերտի անվերջ ձևափոխմամբ վեպը պատկերում է մի բեկոր՝ ուր երիտասարդ հերոսները՝ բախվելով դեսպոտիզմի դաժան իրողությանը, սահմանում են կյանքի այնպիսի ձևեր, այնպիսի հարաբերություններ, ուր տրամաբանությանը փոխարինում է կեցության անգիտակցական հոսքը: Բանակից գորացրված 28 ամյա զինվորի հայրուցիանցիաները միմյանց միջով բացվող պատուհաններ են, որոնք վերադարձի և վերջնական հրաժեշտի բացառիկ հնարավորություն են ընձեռում նրան: Բայց այս վերադարձը ոչ թե անցյալը լուրջ արտացոլելուն և վերաբժնորելուն է միտված, այլ գեղեցկության ակնթարթները հավերժացնելուն և պահպանելուն: Այս վերադարձը որոնումն է, կարոտը և հպումը հիանալու կարողության կորստի, թեկուզ մի աշխարհում, որտեղ կյանքն ու մահը խնդիրներ չեն այլևս: Միրելով Կլոդ Միմոնի, Կոստան Զարյանի, Պետեր Հանդկեի, Ֆիլիպ Ռոտի, Իտալո Կալվինոյի ստեղծագործությունները, երիտասարդ արձակագիրը շարունակում է համաշխարհային գրականության լավագույն ավանդույթները՝ փորձելով պատկերել և ստեղծել սեփական էսթետիկան, որի համարձակ դրսևորումը «Ցտեսություն, Ծիտ» վեպն է:

«Ամեն գիշեր անկողնուս մեջ, քնելուց առաջ հեռախոսովս միացնում էի Սատիի Գիմնոպեդիե No. 1-ը, երկրորդ հարկից նայում էի պատուհանից դուրս, սպասում էի կառաուլի հերթափոխը զենքերը զնգզնգացնելով, բատինակները ասֆալտին դմբափակելով ու իրար մեջ փսփսալով՝ անցնի պատուհանիս տակով, զուգահեռ մտածում էի օրվա ձեռքբերումների կամ կերածս քաքերի մասին, հետո նոր քնում էի»:

Արամ Պալյանի «Ցտեսություն Ծիտ» վեպը հենց այդգիշերների ապրումներս են, այսինքն, բանակի զգացական կողմը: Ամեն զինվոր օրվա մեջ տղամարդ է խաղում՝ լուրջ, անվախ, անզգա, բայց ներսի մասը երբեք ցույց չի տալիս կողքիններիս, որովհետև զգացական մասովը բանակում չես կարող համբավ ձեռք բերել, թուլամորթ կլինես, քեզնից վախեցող չի լինի: Դրա համար օգնության է գալիս գրականությունը, որ ներսիդ ունեցած վախերն ու ամոթները դուրս հանես»:

Վեպում հերոսը զուգարանից սանր է վերցնում, իսկ բանակում զուգարանն այն տեղն է, որտեղ նույնիսկ, եթե մենակ ես մնում, վախ կա, որ քեզ հետևում են: Հերոսի սանր վերցնելը վկա է ունենում, ուրեմն ամբողջ գորամասը շուտով կիմանա անարգվածի մասին: Այն անարգվածի, ով իր քաղաքացիական ընկերոջ մասին սիգար ծխելով ու ուրախանալով մտածում էր, որ շուտ մեռավ. «Որովհետև եթե չմեռնեիր ու բանակ գայիր, ինքնասպան էիր լինելու»: Մենք էլ մեր շրջապատի մարդկանց ենք բանակում պատկերացնում, բայց ոչ մի անգամ մեզ չենք պատկերացնում ու ինչպես այս դեպքում, ընկերոջդ տեսնում ես ճնշված, զինվորների ստրուկ, աֆիցեռի տանձիկ, բայց երբեք մտքովդ չի անցնի, որ մի օր սանրը կընկնի ձեռքիցդ, կվերցնես ու կտեսնես ու ստիպված կլինես նույնանալ Միկի Մաուսի հետ (վեպում գորամասի զուգարան մաքրողը, փչացվածության խորհրդանիշ), երբեք ապահովագրված չես բազմաթիվ

զինվորներից մեկը դառնալուց: Չնայած վեպում հերոսը մի քանի կերպարանք է ընդունում, բայց այդպես էլ չի դառնում Միկի Մաուս, լավ է մեռնել քան նույնանալ Միկի Մաուսին, ու ծանր տառապանքներից հետո ինքնասպան է լինում: Երբ Միկի Մաուս չես, զուգարան մաքրելը մահին հավասար բան է:

Թերևս, բացի Միկի Մաուսից, մնացած կերպաները ոչ այնքան իրական են ու կարծես մուլտֆիլմի հերոսներ լինեն, ինչն ավելի է մոտեցնում բանակի իրականությանը, քանի որ բոլոր զինվոր-զինվորականների կերպարները պարտադրված են, իսկ Միկին այն աստիճան է իջած, որ կարիք չունի կերպարանափոխվելու ու դարձել է իրական: Ինչպես մեր գորամասի «լավերը» գորացրվելու օրը Գավոյին (զուգարան մաքրողին, որը քաղաքացիական էր) պաշտում ու գրկախառնվում էին, այդպիսով դուրս գալիս իրենց պարտադրված խաղարկային կերպարից:

Պաշյանը ընթերցողին երևակայելու բազմաթիվ հնարավորություններ է տվել, այդպես էլ չբացահայտելով, արդյոք հերոսը մեռավ բանակում, թե գորացրվել էր, թե 28 տարեկան ինչ-որ գորացրված մեկը բանակային տարբեր սցենարներ է պատկերացնում, ոնց որ հիմա, հետադարձ հայացք գցելով ծառայածո տարիներին, չես հասկանում՝ արդյոք դու ես եղել:

«Ցտեսություն, Ծիտ» վեպի հերոսը փորձում է վերապրել սեփական մահը եւ պտտվում է այդ «անհավանական» թվացող բացակայության շուրջ, որը գնալով շնչավորվում է:

Արամ Պաշյան. «Ցտեսություն, Ծիտ» վեպը բոլոր նրանց համար է, ովքեր հետաքրքրվում են արդի հայ գրականությամբ:

ԳԼՈՒԽ 4: «P/F»

««P/F»-ը իմ հոգևոր թշվառության, իմ անկման ու իմ առ ոչինչ լինելու հացն էր, որ յոթ տարի թխել եմ, եփել եմ, հավաքել եմ, տուն սարքել. լրիվ, լրիվ «սարքոցիա» գնում. իսկը սարքել եմ, բայց սարքել եմ խեղումի, անճարության ու հոգեվարքի ձեռքով, որ

մեկ-մեկ ասես ինքն իր երեսը ճանկոտոջ բարուրի երեխա լինի, չգիտի՝ ճանկոելն ինչ է, սեփական երեսը վնասելն ինչ է – ուղղակի ճանկոում է, ծնվել է, որ ճանկոի:

Փոքր ժամանակ ես ու քույրս թխվածքի տուփ ունեինք, միջի թխվածքները համով, համով կերել էինք, տուփը դուրներս շատ էր եկել: Հիշում եմ՝ սովորական տուփ էր, երեսին՝ սովորական ջեմով թխվածքի պատկեր, բայց չգիտեմ ինչու խելագարի պես սիրում էինք տուփը ու մեջը պահում մեր դոնալդները, լովիսները, տուփո՞ւները, մեր կերած ամերիկյան կոնֆետների թղթերը:

«Վեպ» կոչվածը ինձ համար իմ ու քրոջս մանկության թխվածքատուփն է, որի մեջ ես տեղավորել եմ բոլորովին այլ բաներ, այնպես ինչպես, յուղի տարայի մեջ տաստիկս կոճակներ էր հավաքում՝ տարբեր վերարկուններից, տարբեր շապիկներից, տարբեր բլուզներից, բայց միննույն է՝ դրանք կոճակներ էին:

«P/F»-ի կազմին՝ ամենաներքևում գրված է՝ «վեպ» - դա պոզայի համար չի արվել, թե տեսեք վեպ եմ գրել, կամ ինձ պատեպատ եմ տալիս, որ«P/F»-ը անպայման վեպ համարվի: Չէ, դա ուղղակի իմ տուփի, իմ արկղի անվանումն էր, որի մեջ մասունքներ հավաքեցի»:

Բայց ինչպես հայտարարված է «P/F»-ում, «փամփուշնտերը հալում են, պատերազմը հալում է, ամեն ինչ հալում է: Երեսանցիները դեռ ողջ են: կյանքը դեռ կյանք է»:

Պատերազմն ավարտվեց, և արթնացած հավաքական պատմությունների ահեղ ալիքից մենք սկսեցինք դանդաղ վերադառնալ մեր անձնական հիշողություններին, համագգայինից՝ մեր փոքրիկ կյանքերին: 2021-ի սկզբին Պաշյանը երեսանցիների մոտ վերադարձավ իր ինքնավիպագրությունով: Այս անգամ նա մի քանի ժամվա ընթացքում կարդաց գրքի ամբողջ տեքստը գրախանութ-սրճարաններից մեկում, որտեղ հավաքվածները սկզբում մոտենում էին տաղավարին ու «վեպը» ուզում, բայց հետո երկուսուկես ժամ լսում էին ընթերցումը, լսում էին ամենախսկական, կենդանի պոեզիա՝ այլևս հարցեր չտալով ժանրի, տեսակի, ոճի մասին:

Պաշյանի տնկած ծառերը բերք են տվել, և դրանք օգնում են, որ ընթերցողն ավելի լավ հասկանա նրա փորձարկումը: Եվ իսկապես, «P/F»-ի բեկորային, առաջին հայացքից իրար հետ կապ չունեցող պատկերներն ավելի պարզ կդառնան, եթե ծանոթ լինեք հեղինակի համար նշանակալի՝ Պատրիկ Մոդիանոյի քաղաքային սրճարանների մթնոլորտին, և Վալտեր Բենիամինի «Բեռլինյան օրագրի»՝ լույսով ողողված լռչիաների, կոր փողոցի թողած տպավորություններին: Տեքստն ընթերցելուց հետո Պաշյանը խոսում է իր գրական այգու ևս մի հատվածից՝ Ջեյմս Ջոյսի «Դուրլինցիների» մասին: Հիշողությունները առանձին պատկեր-բեկորների բաժանելու պատճառը ոչ այնքան գրողի հուսահատությունն էր՝ անցյալը մեկ ամբողջական, կապակցված պատմվածքի վերածելու անհնարիությունից, որքան «անցյալի սոցիալական անդառնալիության» գիտակցումը:

Որպես կորուսյալ ժամանակի (մանկություն, պատանեկություն) և տարածության (հարազատ քաղաք) կարոտ՝ հիշողությունների շարք վերստեղծելու բենիամինական մեթոդն այս դեպքում մեզ վերադարձնում է Երևան, 1990-2000-ականների սկիզբ:

«P/F»-ի էջերին պատմողը երկակի քարտեզագրում է իրականացնում. նշում է վայրեր, որոնք տեղակայված են քաղաքի արհեստականորեն հրահրված ամենգիայի գոտում՝ Աֆրիկյանների տունը, որ գոհ գնաց վերջին տասնամյակների ջենտրիֆիկացիային և ընդմիջտ դարձավ տեղի հիշողությունը ավերակների վերածելու տրավմա, կամ տրամվայները, որոնցից քաղաքի իշխանություններն ազատվեցին, չպահանջված լինելու պատճառով, կամ Ալավերդյան փողոցը, որը վաղուց արդեն վերանվանվել է և կուլ գնացել 2000-ականների Երևանի կառուցապատողներին, և այդպես շարունակ: Թվում է՝ հեղինակին չեն վտարել, արտաքսման փաստը բացակայում է, բայց դրա հետ մեկտեղ քաղաքային ամբողջականությունից վտարվել է մեր հիշողությունը: Ինչ-որ առումով վտարված է հենց վեպի հերոսը, ինչպես որ Երևանի ու երևանցիների անցյալն է վտարված քաղաքից: Սակայն մեր հավաքական մոռացումի այս վայրերի հետ միասին, վեպի ամբողջ ընթացքում վերարտադրվում է արդեն գոյություն ունեցող վայրերի հիշողության շատ անձնական տեղագրությունը. քաղաքային տարածությունը ներկայացված է որպես մասնատված սարահարթն այն բոլոր հիշողությունների, որոնք հաջողվեց գրառել, որպեսզի դրանք պահպանվեն միայն գրի տեսքով: Աբովյան փողոցը, Նալբանդյան փողոցը, Սարյան-Պուշկին խաչմերուկի «Ռոզա» կրպակը, Արաբկիրը, Հրազդան գետով ձգվող կամուրջները: Եվ այստեղ դարձյալ զգացվում է պայանական գրական անտառի ազդեցությունը, ու թվում է՝ ժամանակակից հայ գրականությունը «P/F»-ի շնորհիվ ստանում է սեփական documentary fiction-ը:

Ինչպես և առաջ, Պաչյանին հետաքրքրում է ոչ թե ամենօրյա երևանյան կյանքի մոնումենտալությունը, այլ բեկորները, քաղաքի կենտրոնի նկարագրությունը առօրյա այնպիսի գործողությունների, դեպքերի ու իրադարձությունների միջոցով, որոնք կարևորություն ունեն ոչ թե բոլորի, այլ մեկ հոգու՝ պատմողի, և գուցե նաև մեկ ուրիշի՝ քաղաքի հասարակ բնակչի համար, որը պարբերաբար ընտրում էր այդ երթուղիները, սիրահարվում այդ նույն սրճարաններում: Կարծես թե ժամանակին իրական Երևանը շոշափելու նմանատիպ փորձ է արել նաև Մկրտիչ Արմենը, որի մասին Պաչյանն այդքան շատ է խոսել և գրել: Սերը քաղաքային տարածության հանդեպ՝ որպես հասարակ մարդկանց և ո՛չ թե պատմության գրքերում հանդիպող հերոսների կամ հայտնի անձանց ապրելու և հիշողություն ձևավորելու վայրի, ասես համընկնում է երկու տարբեր դարերում ապրող գրողների մոտ՝ մեն-միակ տարբերությամբ. Արմենի հերոսն ապշահար հետևում է, թե ինչպես է ոչ ոքի չպատկանող մոնումենտալը ավերակների վերածում արևելյան քաղաքի վերնակույսար կյանքը, մինչդեռ Պաչյանի հերոսն ականատես է դառնում ինչպես մոնումենտալ, այնպես էլ հասարակ, ժողովրդական քաղաքային տարածության մասին հիշողության վերացմանը:

Նրանց, ովքեր գայրանում են մեծ այուժետային արձակի բացակայությունից, հեղինակը պատասխանում է տեղի հիշողության տեղագրությամբ: Քաղաքը բեկորային է, այդ իսկ պատճառով այդպիսին է նաև վեպը. այդ փլուզված խճանկարն

ապրողի հիշողությունը բեկորային է, այդ պատճառով էլ պատմող սուբյեկտն ինքը լեզվի մեջ մասնատված է դառնում: «Ես բեկորային եմ»՝ ասում է նա՝ իջնելով գետի կիրճը, մեջքին ուսապարկ, որում հավաքել է բոլոր սևագրերը, բոլոր տպագրված ու չտպագրված գրքերը, գիրք, որ ստեղծվել է այս տասը տարիների ընթացքում: Ամբողջ տեքստով կարմիր թելի պես անցնում է հոսքի՝ գետի հոսանքի մոտիվը: Հրագդանի կիրճում նա գտնում է այդ դուրս ժայթքող հոսանքը, որը պիտի առարկայացներ անգոյության գաղափարը. «Երևանը ես չեմ, / լեզուն ես չեմ, / անցյալը, ներկան ու գալիքը ես չեմ, / ես ես չեմ»: Մարմնից գատվելու ձեն-բուդդիստական փորձ, կամ էլ հեղինակի չգոյության բարտյան հայեցակարգի ցուցադրում: Քեզ, բայց ոչ քո մասին գրելու փորձը կրկին հիշեցնում է Ջեքալդի խոսքն այն մասին, որ ինքնակենսագրություն գրելն իր համար ձանձրալի գործ է. եթե նույնիսկ գրել կենսագրություն, ապա միայն ուրիշներինը՝ նրանց, ովքեր հատում են հեղինակի սեփական կյանքի հետագիծը:

Բայց այս յուրօրինակ documentary fiction-ի գիր-հոսանքում, գլխավոր հերոսն ամենևին էլ կիրճով անցնող գետը չէ, որի ափերին կարող ես տալ սևագրերդ, որը կօգնի ազատվել ինքդ քեզնից ու քո գրից: Քաղաքի հիշողությունը, ինչպես և պատմողի դեպքում, մասնատված է, քանզի դրանք երկուսն էլ պարտվել են ժամանակի անդադար փոխակերպումներին: Այս հիշողություն-մոռացության մեջ կենտրոնական դիրքում այն երակն է, որ անցնում է Երևանի կենտրոնով, բայց բնակիչների աչքից հեռու: «Գետառը փակեցին». թվում է՝ դրա մասին հիշում են, գրել են պաշտոնական թղթերում և քաղաքի պատմության մեջ, բայց բռնի փոփոխված, բետոնով ու ասֆալտով պատված հունն այլևս ուղիղ կապ չունի քաղաքացիների կյանքի հետ: Միայն գետի մասին հիշողներն են երբեմն գալիս դրա տեղ-տեղ բաց ափերի մոտ, որտեղ դեռ լսելի ու տեսանելի է հոսանքի ուղղությունը, նայում են գետին, որ դարձել է ինչպես սեփական, այնպես էլ Երևանի անցյալի հուշերից: Հիշողության մթնշաղ ուղևորվող հատուկենտ ճամփորդներից է Պաչյանի հերոսը՝ ՔԲ-ը՝ ՄԵԼը՝ Արամը: Գետառը գոյություն չունի, եթե չկա հիշողություն: Միայն հիշողությունը կարող է շարժման մեջ դնել քաղաքի որմնածածկ գետը: Պաչյանի հերոսը ոչ միայն կարոտով վերհիշում է ու ցույց տալիս գետի կորուստը, այլև սուզվում է հոսանքի գիրկն ու թվարկում այն ամբողջ աղբն ու թափոնները, որոնցով մենք կեղտոտել ենք մեր փակ զարկերակի գորշ ջրերը, ինչպես որ մեր հիշողությունն ենք աղտոտում նորությունների ու գովազդի ամենօրյա հոսքով:

Գետառը փակել են ստորգետնյա հունի մեջ, և մենք այն չենք տեսնում: Մենք ինչ պատահի լցրել էինք դրա մեջ, մենք հիշում ենք Գետառը միայն իբրև քաղաքի կենտրոնով ձգվող բարակ ժապավեն, որի մասին պատմում էին մեր նախորդները: Հիշո՞ւմ եք Երևանի հեղեղումը, պատմությունը՝ չտեսնված չափերի առնետների մասին, որոնք գետից դուրս էին եկել ու լցվել քաղաք: Պաչյան-պատմողը հիշում է այդ ամենը, բայց չի թախծում անցյալի համար, չի մեղադրում մեզ: Նա նույնպիսի երևանցի է, նա էլ է սատկած շանը գցել Գետառի մեջ, թթել ու ատել այն, բայց նա հաստատ գիտի, որ ինչ էլ լինի, Գետառը դեռ կա:

Գետառի ջրերը մեր հիշողության ու հետհիշողության կրիչներն են: Այն հոսում է ի հեճուկս, ինչպես որ մեր հուշերն են հոսում, ինչպես որ գրվում է հիշողության վեպը, որում հերոսը շարունակում է լողալ քաղաքի փողոցներում և հուսահատ պահանջել՝ «վերադարձրե՛ք տրամվայը Երևանին»:

Ուրախալի է, որ մեր ժամանակներում, ցուրտ ու մութ տարիների հարաբերական լրությունից հետո, նոր անուններ հայտնվեցին եւ որոշակի փորձեր են արվում ի հայտ բերելու նոր տաղանդների, որոնք ասելիք ունենան, չկրկնեն հինը, աշխուժացնեն գրական աշխարհը: Եւ ասպարեզում հայտնվում են հետաքրքիր անուններ՝ երիտասարդ ու եռանդուն, որոնող ու փորփրող: Եւ ամենակարեւորը՝ մենք հույս ունենք, որ նրանք իսկապես տաղանդավոր են լինելու եւ օժտված՝ ժամանակակից ու սուր հայացքով:

Վեպում P/F ծածկանունով համանուն հերոսը, ով տարբեր իրավիճակներում և հատվածներում ներկայանում է նաև այլ անուններով՝ Սև, Ֆիլ, Արամ, իր հիշատակարանը ավարտում է մենախոսական ձևերգով առ Գետառը: «P/F»-ի շուրջ մտորող իր էսսեում արվեստաբան, երաժշտագետ Մարինե Կարոյանը գրում է՝ «Հետզհետե խտացող անցյալի, ներկայի ու վարագույրի ետևից թափանցող ապագայի կտորտանքները Պաչյանն ամրացնում է ճապոնական Քինցրգի տեխնիկայով: Ու այդ ոսկեջրած մածուկն այս անգամ Գետառն է: Հայնե/Շուման-ի պոետի նման («Պոետի սերը») Պաչյանի անսպասելի պոստյուդիան ձոն է մի գետի, որի մեջ նա թողնում է իր հիշողությունները, սերն ու երգերը: Սա ասերգ է աղբի մասին, որին ամեն մի Հռենոս կնախանձեր: Սեփական վերքերը լիզող կատվի նման, իրեն Գետառին նույնացրած հեղինակը անցավ ապրում է իր էկզիստենցիալ միայնությունը: Ու այդ միայնության մեջ Պաչյանն «օգնություն չի խնդրում»: Նա դրա կարիքը չունի: Ես հանգիստ եմ նրա համար»:

«P/F»-ում սևը և իր ընկերը գիշերով Աբովյանի՝ «Վերք Հայաստանի» հերոսի՝ Ադասու շիրմաքարն են փնտրում: Դա նոր լեզվի փնտրտուք է, նոր լեզվի անհրաժեշտություն, մերօրյա իրականությունը ընթերցելու ունակ նոր պատմելաձևի կարիք, աղավաղված Երևանի ու նրա ապագայի որոնում: Մինչդեռ փնտրողները՝ սևը և իր ընկերը, արդեն մարդիկ էլ չեն, նրանք անստվեր են, անմարմին, անգամ ուրվականներ չեն, ոչ էլ վամպիրներ: Իսկ նոր, կենարար բան փնտրել-գտնելու համար առնվազն պիտի ստվեր ու մարմին ունենաս:

«P/F»-ի ավարտը՝ Գետառը, որ գրվել է 2013 թվականին, փոխում է վեպի ողջ հնչերանգը, գուցե նաև վեպի ողջ իսկությունը:

Մեծ հաշվով վերջին դրվագում Գետառը հին, ծեծված, բայց դեռ թարմությունը պահպանող ճշմարտությունն է հնում՝ «Շատ մի ատիր՝ սիրել կա»:

ԳԼՈՒԽ 5: «ՕՎԿԻԱՆՈՍԸ»

Արամ Պաչյանն իր «Օվկիանոսը» գրքում կարծես թե կարողացել է թափանցել իրերի, առօրեականի ու նյութականի մեջ թաքնված ոգեղենության մեջ: Եւ դա անում է

իսկապես գեղեցիկ ձեռով, շունչ տալով այդ իրերին ու առարկաներին: Նա հավաքում է ի մի է բերում, ընդհանրացնում այն, ինչ մտածում է, արտահայտում՝ ամփոփելով, կենսական լիրիկա հաղորդելով այդ ամենին: Նա ապացուցում է, որ գրողն իր ժամանակի կրողն է եւ արտահայտողը: Նա բարձրաձայնում է այն, ինչ օդում է եւ շրջապատում, լեզվի վրա է խոհերում: Նա այն համարձակն է, ով բարձրացնում է ժամանակի տրամադրություններն ու մտքերը, հուզող խնդիրները, ընդհանրացնում դրանք իր աշխարհայացքով ու բարոյական արժեհամակարգով: Եւ այստեղ է, որ կարելուվում է գրողի արտահայտման ձիրքը, լավատեսությունը եւ գրականությունը կյանքով արժեւորելու հմտությունը: Իսկ դա, ասենք, որ ամեն մեկին չէ, որ հաջողվում է: Դա Արամ Պաշյանին, իսկապես, հաջողվում է, ինչպես հաջողվում է կյանքի նույնիսկ խառնափնթորության մեջ լավն ու զգայականը տեսնելը, ոչ թե բառերով, այլ՝ հոգով ու սրտով գրելը: Նա կարողանում է երեւոյթների թվացյալ մերկությունից ու քարացածությունից սեղմել-հանել զգացմունքայնությունն ու ռոմանտիկան, անկեղծությունն ու թաքնված երաժշտականությունը, որը մեկ բառով ի վերջո, կարելի է անվանել սեր՝ կյանքի հանդեպ: Եւ դա գրավում է ընթերցողին:

Մեղմ ժպտալով՝ դու երազանքներ էիր բաժանում ու ասում էիր, որ երազանքները ինքդ ես թխել...պետք է որսալ ծիծաղն ու գնալ նրա հետքով...» – գրում է «Օվկիանոս»-ի հեղինակը «Քո հետքերով» պատմվածքում: Իսկ միգուցե հենց երազանքներն ու թռչնի ազատությունը՝ կարող են փրկել մեր օրերի մարդուն եւ հանել – փրկել իր իսկ հորինած օվկիանոսից:

Կարմիր թելի նման ողջ գրքով մեկ անցնող այս հարցադրմանը պատասխանն էլ հենց այն հրաշալի գիրքն է, որ կոչվում է «Օվկիանոս»:

«Օվկիանոսը» հրատարկել է 2014 թվականին «Անտարես» հրատարակչությունը:

Գիրքը բաժանված է մի քանի մասի՝ «Երեք տեղում», «Իր մասին», «Զէ», «Քո հետքերով», «Հիշելով ընթերցողին», «Երեք պատմություն ընկերության մասին»:

Ծիսական Անձրենն ու գաղափարախոսության բացակայությունը

199 էջերում ընթերցողին հայտնվող, նրանից հեռացող տարբեր պատմությունների, իրադրությունների մեջ գրքում կա մի խորհդանիշ, որն ամենասկզբից մինչև վերջին տողն առկա է: Անձրելը: Մինչև վերջին պատմվածքն հասնելն այն ենթարկվում է տարբեր դեֆորմացիաների ու գրքի ավարտին արդեն փոփոխվում ու հակադրվում ամենասկզբի իր տարբերակին:

Տարբեր իրավիճակներ, պատմություններ ու անձրեններ, որոնք մեկ սենյակի մեջ են գալիս, մեկ գրողի հոր կողմից անվանվում «բանվորագյուղացիական» (Մենք հաղթեցինք աշխարհին), մեկ դառնում «մեր հիշողությունն ու մարմինների նշանակությունը պահպանող կաթիլներ» (Աղոթք՝ անձրևի համար) :

Գրքում ու գրքի միջոցով ընթերցողին տեղ հասցվող ընդհանուր ապատիայի (որը կարելի է բնութագրել իբրև համաշխարհային գաղափարական օրգիայից հետո տիրող ապատիա, հասարակության ունայնություն) զգացողության մեջ անձրևը

Իմաստի, Գաղափարախոսության խորհրդանիշն է: Գաղափար կամ Իմաստ, որը մարդկային գոյությանը տալիս է որոշակի նշանակություն ու նշանակետ: Մակայն անձրևը մի քիչ շատ է, ավելի, քան պետք է: Ըստ 12-րդ դարի գերմանացի միստիկ միանձնուհի Հիլդեգարդ ֆոն Բինգենի՝ այսքան անձրևը նույնն է, ինչ անձրևի բացակայությունը՝ վտանգավոր է ու բերք չի տա:

Կաթիլների մեջ ոչ աշխարհը կտեսնես, ոչ քո հոգում կոծկած ու ցայտուն ապրումները, որ հետո տարար («Երեք պատմություն ընկերության մասին»):

Այստեղ՝ ժողովածուի վերջին էսսեում անձրևն իմաստագրվում է ու կորցնում գրքի առաջին հատվածում գրողի կողմից իրեն ընձեռված «նշանակությունը պահպանող կաթիլ» լինելու շնորհի: Բայց, միևնույն ժամանակ, այնտեղ նաև նշվում է.

«Ասում են՝ ջուրը հիշողություն ունի: Եթե բախտներս բերի, ջուրը մեզ կհիշի, ախպերս»:

Մի կողմից՝ ջուրը, կաթիլները ունեն իրերն ու իրադարձությունները, մարդկանց, այլ կերպ ասած ԻՆՉԸ հիշելու ունակություն, բայց մյուս կողմից՝ մնում են դատարկ, ու անհնար է դրանց մեջ տեսնել որևէ բան:

Ընդհատվող, նորից սկսվող անձրևից հետո քաղաքի փողոցների վրա դու դեռ կարող ես թափառել, ջնջել, վերացնել քո ակամա հետքերը... («Հրաջք»):

Տեքստերում չկա ինքնառնչացում, միայն հարցադրումներ, հիշողություններ: Ներկայացված հերոսները աղոտ են երևում ու ամբողջական չեն, ասես Օվկիանոսի ալիքներից ու անձրևի կաթիլներից գունատված ու իրենց բնորոշիչ հատկություններից զրկված լինեն: Նրանք հետք են, որոնք մի ժամանակ ունեցել են միս ու արյուն, սակայն բազմակի մեկնաբանությունների պատճառով դարձել են բարդ նկարագրելու ու ՊԱՏԿԵՐԱՎՈՐ պատկերելու համար: Հիմա նրանց պատկերել չի լինի, կլինի միայն հղել նրանց վաղեմի գոյությանը:

Պաշյանը չի մեկնաբանում, չի բացատրում, ու թվում է, թե դա պետք է հեռացնել այն ամենից, ինչն ինքն ՈՒԶՈՒՄ է ասել, բայց հակառակը՝ հանելով ընթերցողի ու իր տեքստի միջև ընկած պատնեշը, նրա տեքստն ավելի հեշտ ընկալելի է դառնում ու ազդում ընթերցողի վրա՝ զգացմունքային առումով, կաշում նրան «մաքուր» գեղագիտության տեսանկյունից:

Իտալացի սասփենսի վարպետ Դարիո Արջենտոյի ֆիլմերի պես՝ բացատրությունը հանված է՝ չկան պատճառներ, նախադրյալներ, կա ընթացք, որը պարզ չի՝ ինչ է եղել ու ինչ կդառնա: Նրա ֆիլմերում էլ, Պաշյանի գործերի պես, մոտիվի (Պաշյանի դեպքում՝ բացատրության) պակասը, չի խանգարում անմիջական կապ հաստատել ու զգացմունք արթնացնել դիտողի/ընթերցողի մոտ:

Բացատրության պակասը չի հեռացնում ընթերցողին գործից, այլ ընդհակառակը՝ մոտեցնում է՝ տեղափոխելով քննադատությունների ու վերլուծությունների

տեքստային ու անընդմեջ մեկը մյուսին հղող աշխարհից մեկ այլ տեղ՝ անմիջական զգացմունքների ու անմիջական փորձառության:

«Օվկիանոսում» հստակ կա մեկնաբանության ու տեքստի ուժի մասին գիտակցումը, դա կարելի է տեսնել «Իր օրագրի մասին» վերնագրված հատվածում:

Որովհետև այդ ինքնակամ դատապարտյալների օրագրերում է որոշվում հենց իրենց, բոլորի, մարդկության ճակատագիրը:

«Ֆրանց Կաֆկան 1910 թվականին իր օրագրում գրում է

«Ես այլևս չեմ թողնի օրագիրը: Այստեղ պիտի պահպանեմ ինքս ինձ, որովհետև միայն այստեղ է որ կարող եմ »:

Մի կողմից՝ ցույց է տրվում տեքստի ուժն իբրև գաղափարախոսության կրող, որպես սուբյեկտ, ով կարող է անմիջական ազդեցություն թողնել մարդու, նրա ճակատագրի վրա: Մյուս կողմից՝ բաց չի թողնվում նաև տեքստի կարևորությունն իբրև ինքնազննման, ինքնաարխիվացման կարևոր մաս:

Սակայն նույն հատվածում քիչ հետո հեղինակը «տեղեկացնում է».

Ես լրացված օրագրերը վառում եմ ինքս ինձ նորից հանդիպելու համար, ինքս ինձ կրկնելու հավանականությունը մերժելու համար:

Այսպիսով, ներկայացնում է պայքար տեքստի իշխանության դեմ, տեքստի՝ իբրև մի երևույթի, որը հնարավորություն կունենա ապրել իր կյանքով, ունենալ հեղինակի իր տարբերակներն ու սպառնալ նրա կրկնմամբ, հղմամբ ու վերարտադրմամբ:

Իզուր չի հեղինակը խոսում՝ հղելով Կաֆկային, այսպիսով նա ոչ միայն հեռացնում է ողջ ասելիքն իրենից և «ուրիշի բերանով խոսում», նաև նշում է, որ վառում է հենց օրագրերը, իրեն հնարավորինս ամենամոտ տեքստերը, որոնք թույլ կտան իր անձից էլ սարքել խորհրդանիշ, որը սկզբում կունենա, հետո կկորցնի տարբեր իմաստներ, այնքան, մինչև չի դառնա անգույն հղում, որն արտասանողը ոչ թե կխոսի ՆՐԱ մասին, այլ «ի նկատի կունենա» ՆՐԱՆ:

Անձրևը կլանում է մեր վազքը, բացականչությունները, հեքը, ծիծաղը, վերցնում է մեր շարժումների հիշողությունը, մեր մարմինների նշանակությունը, և մենք վազում ենք ջրափոշու շայունի միջով, վազում ենք առանց մեզ: («Աղոթք՝ անձրևի համար»):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ասում են, ամեն ժամանակ ծնում է իր գրողներին, եւ գրողն էլ է իր ժամանակի ծնունդը: Մեր բարդ եւ խառնակ ժամանակներում երեւի հենց այսպիսի գրող էր պետք մեզ, որ արտահայտեր իր տեղի ու ժամանակի գաղափարները, մտածելակերպի ու կացութեւի ոչ միայն իմաստն ու էությունը, այլ նաեւ խառնաշփոթութեան մեջ թաքնված գեղեցիկն ու լիրիկականը, եւ մարդկային կեցութեան ողբերգութեան մեջ բողբոջող ապագայի սաղմերը:

Քանի՞ սը կկարդան Արամ Պաչյանի հեղինակին եւ քանի՞ սը կհավանեն, դժվար է ասել: Պարզ է մի բան, որ գրողին, հատկապէս լավ գրողին, իր ժամանակին չեն հասկանում: Որովհետեւ լավ գրողը միշտ մեկ քայլ առաջ է իր ժամանակից, նրա հայացքը ապագային է հառված եւ միայն ժամանակն է գնահատելու նրան: Սակայն պարզ է նաեւ մի բան, որ կարդացողները կյանքի հանդէպ մի մեղմ ուրախություն կզգան, կարծես հետաքրքիր հայտնագործություն արած լինեն, մի լավ, նոր եւ գեղեցիկ բան, կյանքի եւս մի նոր գաղտնիք. այդպէս աշխարհը նոր հայտնաբերող երեխան է ուրախանում նոր խաղալիքով, պահպանում եւ փայփայում այն: Եւ երբ դու հայտնաբերում ես կյանքը նորովի, այն սիրելի է դառնում քեզ, եւ երբ նորովի ես տեսնում, գնահատում եւ հասկանում մարդուն, ուրեմն նաեւ ներում ես նրան ... սիրում:

Մարդն է ամենակարեւորը. ահա Պաչյանի գրվածքների հիմնական նյութը: Հասկանալ մարդուն, նրա հուզաշխարհը, երկրային անցողիկի մեջ՝ նրա փոքրիկ, փխրուն, բայց եւ այնքան խորհրդավոր ներկայությունը: Ահա թե ինչու նրա որոշ պատմվածքներ պարզապէս արձակ բանաստեղծություններ են հիշեցնում, որոնց մեջ մարդկային ամենանուրբ հույզերի մի ողջ օվկիանոս է ծփում:

Այդ հույզերը հիշողություններն են, մարդու կյանքի իմաստավորումը եւ կենսական վազքի ու եռքի մեջ մարդկայինը եւ գեղեցիկը հանկարծ չկորցնելու մտավախությունը: Նրա պատմվածքներում հույզերը կենսագրություններ են, որ գրում են մարդկային պատմություններ, որ անկարեւոր մարդիկ չկան, որ նրանք կարեւոր են արդեն իսկ այնքանով, որ գոյություն ունեն եւ նրանց ներկայությունը արդարացված է:

Կարծում եմ, այսօր մեզ անհրաժեշտ են այսպիսի գրողներ: Գրողներ, ովքեր կարողանում են գեղեցիկ կերպով ներկայացնել մարդուն եւ գնահատել նրան, կարեւորել նրան մի աշխարհում, որտեղ «անիրավ մամոնան» ավելի է գնահատվում մարդկային պարզ հարաբերություններից, փոքրիկ ուրախություններից. մի աշխարհ, որտեղ ավելի ու ավելի է փոքրանում մարդու դերը, որտեղ մարդը դառնում է քաղաքական ու գիտական տեխնոլոգիաների աննշան կցորդը եւ դիմագրկվում: Մեր կյանքը եւ ժամանակը դարձել է մի օվկիանոս, որն ավելի ու ավելի է կլանում մարդուն եւ փորձում արժեզրկել նրան: Եւ հոգու թռիչքն է այն միակը, որ կարող է փրկել մարդուն, երազանքներ պարգեւել նրան եւ բարձրացնել կենցաղային ճահճից ու ժամանակի կլանիչ որոգայթից: Եւ երազանքներ, որ բարձրացնում են մեզ երկինք, տալով «թռչնի ազատություն», մի բան՝ որ չունի այսօր ժամանակակից մարդը...

Դիտարկմանը՝ այսօր եթե ասում են երիտասարդ գրող, ապա գրքասերներն ու ոչ գրքասերները միանգամից տալիս են Պաշյան ազգանունը, Պաշյանը պատասխանել է. «Կյանքիս կեսն ապրել եմ, հետեւաբար այլեւս երիտասարդ չեմ: Մի բան ցանկալի է, որ ինձ ճանաչեին գրքերով, ինչը քաղաքակիրթ աշխարհի՝ ստեղծագործողին հարգելու միակ ձևն է:

Պաշյանին մշտապես հուզել է և հուզելու է անբացատրելի անքննելի, անվերջանալի... գլխովին տրվելով նախանշված խաղին, կարողանում է լսել «...հարվածի ցավից լսած այլանդակ ճիչը»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Արամ Պաշյան «Ռոբինզոն և 13 պատմվածք», Երևան, Գրական էտալոն, 2010

Արամ Պաշյան «Ցտեսություն, Ծիտ» (վեպ), Երևան, Անտարես, 2012

Արամ Պաշյան Ցտեսություն, Ծիտ (վեպ) 2-րդ հրատարակություն, Դարակ, 2017

Արամ Պաշյան «Ռոբինզոն», (պատմվածքներ), Երևան, Անտարես, 2012

Արամ Պաշյան «Օվկիանոս», (պատմվածքներ), Երևան, Անտարես, 2014

Արամ Պաշյան Օվկիանոս, (պատմվածքներ) 2-րդ հրատարակություն Երևան, Անտարես, 2018

https://hy.wikipedia.org/wiki/Արամ_Պաշյան

<https://hy.wikipedia.org/wiki/Ռոբինզոն>

https://hy.wikipedia.org/wiki/Ցտեսություն,_Ծիտ

<https://hy.wikipedia.org/wiki/P/F>